Հարստութեան, կազմակերպութեան, պատերազմի: Մարդկային անհատը հարթուում է ի նպաստ «կենտրոնի» իշխանութեան:

Իրականի մէջ, ամէն ինչ գորշ է:

Քաղաքակրթուած քաղա՛քը: Մի՛ ուղղութիւն: Վեր բարձրանալու համար՝ աջ, վայր իջնալու համար՝ ձախ: Ոստիկանը բարձրացրնում է ձեռքը՝ ամէն ինչ կանգ է առնում: Ժամացոյցի նման:

Միլիոններ ապրում են մեքենաների ռիթմով: Տասը ֆրանկ մետրոն հոգիներ է հիւսում, եւ արեւը դուրս է գալիս ըստ ելեքտրական կայանի վարիչի կամքին:

Հարթում, միացում, գո՛րշ, գո՛րշ, գո՛րշ:

Նոյնաձեւ կոշիկ, գլխարկ: Ծիծաղելի, մեռելային դէմքեր: Հաստ եւ երկայն տետրակների մէջ գրում են մեր կերած կերակուրի մասին, մեր մկանների ուժի մասին, մեր գործնական կարողութիւնների եւ խելքի մասին, տարածութիւնը, որ բռնում ենք, օդը որ շնչում ենք, եւ կտոր դաշտանկարը, որին նայում ենք:

«Անկեստային» թո՛ւղթ:

Հոգին՝ կենտրոնացած մսի փոքրիկ քառակուսիների է վերածուած: Աղքատի կերակուր: Աւանդական եւ կարեւորութիւնից զուրկ մի բան, որի անունը յիշւում է սովորութեան պատճառով: Վերջ ի վերջոյ, կազմակերպուած ընկերութեան համար՝ ընկերային մեքենան՝ հոգեկան ամէն մի թռիչք վնասակար է: Գործնական հոգերանութեան դրասենեակները ուսումնասիրում են մարդկային կարողութիւնները եւ ըստ այնմ նրան գործ են տալիս: Ամէն ինչ զգրոց է եւ ֆիչ: Ոստիկանացած ընկերութիւնը եղի ատելութիւն ունի բանաստեղծների հանդէպ: Բոդլէր, Վերլէն, Ռէմբո: Վտանգաւոր, անիշխանական, անբարոյական մարդիկ են: Խանգարում են: Բայրոն, Շելլի, Ուալդ: Դժուար է նրանց տեղաւորել ընկերային կարգապահութեան զգրոցների մէջ եւ եթէ՝ ըստ տխմար նախապաշարումի՝ պէտք է բանաստեղծներ լինեն՝ կազմակերպե՛նք, հրահանգե՛նք, կանոնաւորե՛նք: Պրոլետ-բանաստեղծութիւն եւ գիւլի:

Քաղաքակրթութիւնը հանճարներին չի մարսում: Նա նախապատուութիւն է տալիս ֆրանսական ակադեմիային եւ պարոն Պօլ Բուրժէին: Մի Շէքսպիր կարող է արթնացնել քնած երեւակայութիւնները եւ մի Դանտէ՝ ահաւոր դատաւորի իր դերում՝ կրակը նետել խեղճութիւնները: Ոչ, ո՛չ: Մի՛ակ ուղղութիւն: Վեր բարձրանալուց՝ ա՛ջ, վար իջնելուց՝ ձա՛խ: Անխտիր:

Տնտեսական եւ խոհանոցային այդպիսի ընկերութեան մէջ՝ հոգին քարանում է, բրածոյ դառնում, փոշիանում եւ ծախւում է փոքրիկ քանակութեամբ (թո՛ւն՝ մահուան վըտա՛նգ) կրօնական եւ ընկերաբանական դեղարաններում:

Քաղաքակրթական (շրջաններում կրօնքը եւս ձգտում է միակ նպատակի՝ ընկերային կազմակերպութիւն, պատերազմ, օգտակարութիւն, «բողոքականների» հոգեկան մանրավաճառութիւնը:

* * *

Մշակոյթը միշտ կապուած է պաշտամունքի հետ:

Աւանդութիւն եւ խորհրդանշան: Ամբողջովին հոգի: Պարզ, մաքուր, միամիտ, յըստակ եւ անշահախնդիր: Մշակոյթը չի ճանաչում կեանքի դժուարութիւնները, որովհետեւ պարզապէս անտեսում է: Նրա նպատակը բոլորովին ուրիշ է: Բացուած թեւի նման ճախրում է եւ ծանրութիւնը կամ քաշողութիւնը չի զգում: Միջոցը, երկնքի կապոյտը, աստղերի ոսկին, անհունը:

Բախտաւոր լողացող եթերի միջից:

Մշակոյթի համար բոլոր դէպքերը եւ փաստերը հոգեղենեցման միջոցներ են: Ինքը բնութիւնը նշանների մի շարք է, ուղղորդ գերանների մի յաջորդութիւն հոգեկան ճամբորդութեան ընթացքին: Բոլոր շղթաները փշրուած են: Զեռք բերուած ազատութիւնը այլեւս հիմնական օրէնք է, մաքուր լինելիութիւն, յստակ կեանք եւ կարելիութիւն:

Այդ դարեշրջաններում նիւթական կեանքի թշուառութիւնները ակռաներ են կրճտում, նիզակներ ցցում, բոցի նման բարձրանում, բայց հոգեկան ապրումները այնքան ներուժ են, որ ամէն ինչ կերպարանափոխում են:

Ովկիանոսի ալիքները ծեծում են եզերքը, բայց մռնչիւնը խենթացած թռչունի նման վեր

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան